№ 93 Յունիսի 5 (17) 1880 Յունիսի 5 (17) № 93

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ: — Ներքին տեսութիւն: Ցովեանեան-Մարիամեան դպրոցի տարեդարձը: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ Պօլանկից: Նամակ Մանգլիսից: Նամակ Բագուից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Շվէյցարիա: — «Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Բանասիրական: Պ. Նազարեանց իբրև գրքի քննիչ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

«Մշակի» երէկվայ համարում տպված Կ. Պօլսի հեռագիրը ցոյց է տալիս, որ վերջապէս հայոց խնդիրը, որ Բերլինի կօնգրէսի մէջ քննված էր և Բ. Դռնից չէր կատարված ուրիշ խնդիրների հետ, վերացականութիւնից անցել է իրականութեան մէջ, դարձել է ճշմարիտ քաղաքական ժամանակակից խնդիր:

Հեռագիրը հաղորդեց որ պետութիւնների դեսպանատների առաջին թարգմանները ներկայացրին Բ. Դրանը պետութիւնների համաձայն գրութիւնը, որի մէջ պարունակվում է կօնվէնցիայի հետևեալ պահանջների կատարվելը. Չէրնօգօրիային նոր հողեր յատկացնելու խնդիրը և Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի իրագործվելը Հայաստանի մէջ վերանորոգումներ մտցնելու վերաբերութեամբ:

Ուրեմն եւրօպական պետութիւնները վերջապէս հասկացել են իրանց իրաւունքն ու պարտաւորութիւնը ընդհանուր, համաձայն ուժերով ներգործել Թիւրքիայի վրա, իրանց պաշտպանութեան տակ վեր առնելով Հայաստանի դատը:

Դեռ մի քանի օր սրանից առաջ կարդում էինք լրագիրներում որ Աւստրօ-Ունգարիան և Գերմանիան վճռել էին չը խառնվել հայոց խնդրի մէջ և թողնել Կ. Պօլսի անգլիական դեսպան Գօշէնին այդ խնդրի իրագործման մասին հոգալը, թողնել Անգլիային այդ խնդրի իրագործման գիտաւորութեամբ Թիւրքիայի վրա բարոյական ճնշում ներգործելու իրաւունքը:

Բայց վերջին հեռագիրը համոզում է մեզ որ թողնելով չէզոքութեան դիրքը, երկու պետութիւններն էլ միացան եւրօպական միւս պետութիւնների հետ, Բ. Դրան վրա ճնշում ներգործելու նպատակով: Ուրիշ կերպ չենք կարող հասկանալ պետութիւնների համաձայն գրութիւն խօսքը:

Ինչքան էլ Թիւրքաց կառավարութիւնը աշխատեց լռութեամբ անցնել հայոց խնդիրը, դէպի պետութիւնները ուղղված իր հեռագիրների և դիպլօմատիական պատասխանների մէջ չը խօսել Հայաստանի մասին, — այդ խորամանկութիւնը նրան ոչինչ չօգնեց: Հայաստանի խնդիրը այնուամենայնիւ օրվայ, քաղաքական խնդրի սպառնող կերպարանք ստացաւ:

Այժմ Թիւրքաց հայերը պէտք է աւելի էլ զգոյշ և արթուն լինեն, նրանք պէտք է իրանց ձայնը լսելի անեն եւրօպական պետութիւնների ներկայացուցիչներին:

Զօրս խնդիրներ կան, մեր կարծիքով, որոնց վճռվելուց կախված է գլխաւորապէս Հայաստանի, որպէս Թիւրքիայի ինքնավար նահանգի բարենորոգումը:

Հայերը պէտք է աշխատեն որ նախ և առաջ նրանց իրաւունք տան ունենալ Հայաստանում սեփական պահապան զօրք, պէտք է պահանջեն որ հողային յարաբերութիւնները Հայաստանում կարգի գցվեն, պէտք է աշխատեն որ վարչական վերանորոգումները կատարվեն տեղական պահանջման համեմատ և վերջապէս պէտք է ջանան որ չորս դաւանութիւնների հայերն էլ, այսինքն լուսաւորչական, բողոքական, կաթօլիկ և մահմետական հայերը ճանաչվեն Եւրօպայից և Թիւրքիայից որպէս մի ամբողջ ազգութեան անդամներ:

Այժմ, երբ Հայաստանը դառնալու է ինքնավար նահանգ, գուցէ մեր հակառակորդները վերջապէս կը համաձայնվեն որ այլ ևս միտք չունի պահպանել հայոց ազգային ժողովը Կ. Պօլսի մէջ, և անհրաժեշտ է այժմ Բիւզանդիայի օտար հողից տեղափոխել այդ ժողովը Հայաստանի հողի վրա:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ց. ՆԱԶԱՐԵԱՆՑԸ, ԻԲՐԵՒ «ԹՕՄԱՍ ՆԵՂՐՕՐ ՏՆԱԿԸ» ԳՐՔԻ ՔՆՆԻՉ *)

Պ. Ց. Նազարեանցն ևս քաջ յայտնի է, որ հայերիս մէջ ամեն մի այբուբէն գիտացող հեղինակ է դառնում՝ տեղւոյս լրագիրների մէջ յօդուածներ է գրում, զանազան թարգմանութիւններ է անում, զանազան երգերի և այլն հաւաքածու է ի լոյս ընծայում, մի խօսքով գրականութեամբ է պարապում: Իսկ նա, որ Ջամչեանի քերականութիւն է անցել և կարող է հայերէն լեզուով երկու խօսք միմեանց հետ կապել, նա կատարեալ յանդգնութեան է հասնում: Ես չեմ ուզում խօսել սորա վատ հետևանքների վրա առհասարակ, միայն կը յիշեմ այն, որ երբ այսպիսի անձինք սկսում են աշխատակցել որ և իցէ լրագրին, օրինակ «Մեղու Հայաստանին» կամ «Մշակին», գտնվում են անձինք, որոնք, կամենալով ցոյց տալ նրանց տգիտութիւնը, սկսում են մերկացնել նոցա ոչ նոյն իսկ լրագրի մէջ, որին աշխատակցում են այդպիսի պարոններ, այլ անպատճառ միւս լրագրի մէջ: Դորա հետևանքը լինում է այն, որ լրագիրները այդպիսի պարոնների շնորհիւ բաժանվում են ամենաչնչին բանի պատճառով առանձին կուսակցութիւնների: Այդ բնական է, կարող են ասել ինձ, որովհետև այն խմբագրութիւնը, որ համերաշխ չէ որ և իցէ յօդուածի մէջ յայտնած մտքի հետ, ի հարկէ, չի տպի այդ յօդուածը կամ եթէ կը տպէ՝ իր կողմից առանց նկատողութեան չի թողնի, ուրեմն, եթէ յօդուածը տպած է այս կամ այն լրագրի մէջ, այդ յօդուածի հետ համաձայն է և խմբագրութիւնը: Բայց, դժբաղդաբար պէտք է խոստովանել, որ հայոց լրագիրների խմբագրութիւնները միջոց չունեն ամեն մի յօդուած խիստ քննութեան ենթարկելու և ահա ինչու հայոց լրագիրների մէջ տպվում են ոչ սակաւ այնպիսի յօդուածներ, որոնք, եթէ քննվէին խմբագրութեան կողմից, գուցէ և չը տպվէին:

Ես անձամբ, չը կամենալով «Մեղուի» և «Մշակի» մէջ կռւի նորոգելու միջոց դառնալ, գիմում եմ ձեզ, պատուելի խմբագիր, և յոյս ունեմ, որ այս երկու տողս տեղ կը տաք ձեր պատուական լրագրի մէջ, չը նայելով, որ սոքա ուղղված են ձեր մշտական աշխատակից պ. Ց. Նազարեանցի դէմ:

Պ. Նազարեան. 1) Քննել որ և իցէ գիրք, նշանակում է՝ ցոյց տալ որքան նա կարող է ծառայել իր նպատակին, դորա համար հարկաւոր է գոնէ մի երկու խօսք ասել գրքի բովանդակութեան մասին: Դուք այդ չէք արել, որովհետև ինքներդ չէք հասկացել նորա ուղղութիւնը և ոգին: Եթէ դուք հասկանայիք, որ այդ գրքի մէջ նոյնպէս ցոյց է տուած անգղիացոց կալուածատէրների հայեացքը իրանց ստրուկների վրա, դուք պատուելի օրիորդ Տէր-Մարկոսեանի թարգմանութիւնը—«Դու նորանից (այսինքն՝ նեգրից) ինչ պէտք է չինես, աղջիկս...» (что же ты сдѣлаешь изъ него, Мими?) չէիք ընդունի իբրև ռուսաց ոճ: Դուք զարմանքով աւելացնում էք. «մարդուս հօ թաչուն չի կարելի շինել»: Հարկաւոր է հասկանալ (և այդ գեղեցիկ ցոյց է տուած „Թօմաս եղ. տնակի“ մէջ), պ. Նազարեանց, որ անգղիացոց կալուածատէրները նայում էին նեգրների վրա ոչ իբրև մարդիկների կամ մինչև անգամ կենդանիների վրա, այլ ինչպէս անշունչ առարկաների:

Անգղիացիք կարծում էին, որ նեգրներին կարելի է ծառայեցնել ամեն բանի համար, այնպէս որ նոցա կարելի է մինչև անգամ ամենատեսակ խաղալիք դարձնել մանկանց ձեռքում: Այժմ հասկանում էք, պ. Նազարեանց, ինչու հայրը դիմում է իր աղջկան հետևեալ խօսքերով. «դու նորանից ինչ պէտք է չինես...»: Ի հարկէ դուք չէք հասկացել այդ գրքի ուղղութիւնը և ուրեմն նշանակութիւնը մեզ՝ հայերիս համար: Դուք չէք հասկացել, որ այդ գրքի հրատարակողները ի միջի այլոց մտադիր են եղել ծանօթացնել հայերիս փոքր ինչ այն ազգի հետ, որի վրա այժմ չատ և չատ յոյսեր են դրել: Եթէ դուք, պ. Նազարեանց, այս բոլորը հասկանայիք, ի հարկէ, պարզամտութեամբ չէիք ասի. «Զարմանալի է: Մարդուս հօ թաչուն չի կարելի չինել»: Այն, ինչ ձեզ համար զարմանալի է, ուրիշի համար ամենևին զարմանալի չէ:

2) Եթէ դուք կամենում էիք ուշադրութիւն դարձնել միայն թարգմանութեան լեզուի վրա, նախապէս դուք ինքներդ պէտք է գիտենայիք և այն լեզուն, որից թարգմանված է: Ամօթ է չիմանալ որ և իցէ լեզու և դատել այդ լեզուից թարգմանած գրքի վրա: Ասացէք, պ. Նազարեանց, ում մէջ չի յարուցանի ծիծաղ հետևեալը. օրիորդ Ն. Տէր-Մարկոսեանը— Поведеніе Евы заповѣдано намъ Евангеліемъ.. թարգմանել է՝ «Եւայի վարմունքը պատւիրած է մեզ Աստուածաշնչից», իսկ դուք ուղղում էք այսպէս. «Աստուածաշունչն արգելում է մեզ Եւայի պէս վարուել»: Այսինքն՝ ամենևին հակառակ:

Ինչպէս կամենում էք, պ. Նազարեանց, բայց դա կատարեալ յանդգնութիւն է ձեր կողմից: Եթէ դուք այդքան էլ չէք հասկանում ռուսաց լեզուն, գոնէ օգուտ կը քաղէիք նաւթ—ծախող (ինչպէս դուք ինքներդ ծաղրեցիք «Մեղուի» մէջ) Հաղպատեանցի բառգրքոյկից, որի 176-դ երեսը բաց անելով, դուք կարող էիք համոզվել, որ заповѣдать նշանակում է ոչ թէ արգելել, այլ պատուիրել: Չէ՞, պ. Նազարեանց, ոչ թէ այն է խայտառակութիւն, որ նաւթ—ծախողները, քաղուածք անելով միւս բառարաններից, աժան բառգրքոյկներ են կազմում, այլ այն՝ որ ձեզ պէս լեզուներ գիտեցողները լեզուների վրա դատողութիւն են անում: Ի հարկէ, ձեզ պէս ռուսերէն լեզու գիտեցողից չէր կարելի պահանջել, որ դուք գնահատէիք թէ որքան մեծ է զանազանութիւնը ռուսաց բնագրի և օրիորդի հայերէն թարգմանութեան լեզուների մէջ: Ռուսերէն լեզու գիտցողը կարող է միայն զարմանալ, թէ ինչպէս կարելի էր այնպիսի անճոռնի գրած բնագրից երկու տող մինչև անգամ թարգմանել: Մեծ սխալ էր արել ի հարկէ այն փոքրիկ խումբը, որ կազմվեցաւ անցեալ տարի և պարապում էր մանկական

*) Պ. Ց. Նազարեանցը այս օրերս տպել էր «Մեղու Հայաստանի» լրագրի մէջ իր քննադատութիւնը Բիչեր Ստօուի «Թօմաս եղբօր տնակը» գրքի հայերէն թարգմանութեան վրա: Պ. Նազարեանցի յօդուածի նման յօդուածները, որոնք միայն տգիտութեան արդիւնքներ են, իմ կարծիքով, չը պէտք է մեծ առանց ուշադրութեան դարձնելու: Կարդացող հասարակութեանը միշտ հարկաւոր է ցոյց տալ թէ՝ ինչ տեսակ անձինք յանձն են առնում նորան առաջնորդելու: Այդպիսի անձանց խնայել, այդպիսի անձանց տգիտութիւնը չը ցոյց տալ հասարակութեանը, նշանակում է՝ հասարակութեան մեծ մասին վնասել: Այս յօդուածը, որի մէջ ցոյց է տուած թէ պ. Նազարեանցը („Մեղուի“ հայերէն գրքերի մշտական քննադատը) ինչ տեսակ քննիչ է, առաջարկվեց „Մեղուի“ խմբագրին „Մեղուի“ մէջ տպելու, բայց „Մեղուի“ պատուելի խմբագիրը առանց „կարևոր“ փոփոխութիւնների չը կամեցաւ տպել... Զարմանալի է, կարծես „Մեղուի“ խմբագրութիւնը արդարութիւն պաշտպանելու համար չէր կարող այս յօդուածը տպել, աւելացնելով իր կողմից ինչ կը կամենար:

Ի՞նչ կը լինէր, եթէ ուրիշ հայոց լրագիր չը լինէր...

Թողնում եմ այս յօդուածը առանց որ և իցէ փոփոխութեան ձեր պատուական „Մշակ“ լրագրի մէջ հրատարակելու համար: Թող հայ հասարակութիւնը նոյնպէս դատէ՝ կարող էր արդեօք այս յօդուածը տպվել „Մեղուի“ մէջ թէ ոչ:

Գ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԻՎՆԱՆԵԱՆ–ՄԱՐԻԱՄԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁ

—

Կիրակի, յունիսի 1–ին, կատարվեցաւ Մարիամեան–Ցիվնանեան օրիորդաց ուսումնարանի տարեդարձը. Ժամը տասին սկսվեցաւ սպասարգը Կուսանաց եկեղեցում, որից յետոյ կատարվեցաւ հանդուցեալ տիկին Ցիվնանեանի և նրա հանդուցեալ զաւակների հոգեհանգիստը: Ս. պատարագը աւարտվելուց յետոյ եկեղեցական դասը ժողովրդի և ուսումնարանի աշակերտուհիների և ուսուցչիների հետ միասին գնացին ուսումնարան, որի դահլիճում կարգացվեցաւ ուսումնարանի տնտեսական և ուսումնական հաշիւը և երաւ պարգևաբաշխութիւնը: Դահլիճը զարդարված էր Թագաւոր Կայսր, հանդուցեալ Կայսրուհու, Վեհափառ Կաթողիկոսի, հանդուցեալ Գարբրիէլ արքեպիսկոպսի, Ց. Ցիվնանեանցի և նրա հանդուցեալ կողակցի պատկերներով. դահլիճի հարևան սենեակում մէկ երկայն սեղանի վրա շարված էին աշակերտուհիների ձեռագործներըբոլոր միս սենեակում շարված էին աչք հրապուրող դանազան խմիչքներ և քաղցրաւենիք թէ հիւրերի և թէ աշակերտուհիների համար: (Եթէ ուսումնարանը իսկապէս կարօտութիւն ունէր վիճակախաղի մէջ, մենք չենք հասկանում այս շռայլութեան նշանակութիւնը):

Հանդէսը սկսվեցաւ ուսումնարանի կրօնուսոյց Հայր Արսէն Բաղրատունու ճառով, որը սև գոյներով նկարագրելով (չը նայելով որ այնպէս սև չէր) երեք տարի առաջ մեր աղքատ օրիորդների կրթութեան դրութիւնը, յայտնում էր այն միտքը, որ Մարիամեան–Ցիվնանեան ուսումնարանի բացվելով, միջոց տրվեց հարիւրաւոր աղքատ օրիորդներին կրթութիւն, լուսաւորութիւն տանալ և լաւ մայրեր դառնալ: Ապա խօսելով ուսումնարանի հոգաբարձուների մասին, Հայր Արսէնը շնորհակալութեամբ յիշում էր նրանց եռանդը և գործունէութիւնը, աւելացնելով հանգուցեալ Գարբրիէլ արքեպիսկոպսի և Կուսանաց վանքի մի քանի կոյսերի ունեցած խնամքը այդ ուսումնարանի վրա: Տէր–Հօր ճառից յետոյ և առհասարակ ամեն ճառախօսութիւնից յետոյ աշակերտուհիները երգում էին ազգային երգեր:

Երգից յետոյ խօսեց ուսումնարանի տեսուչ պ. Զիգիրանեանցը, որը համառօտ կերպով ներկայացնելով ուսումնարանի տնտեսական և ուսումնական դրութիւնը, (նրա ճառից իմացվեցաւ, որ ուսումնարանը ունի վեց դասարաններ՝ երեք պատրաստական, առաջին, երկրորդ և երրորդ դասատուն մօտ 160 աշակերտուհիներով. այդքան աշակերտուհիների մօտ 3/4 Ցիվնանեան սանուհիներ են, իսկ 1/4-ը թշուառաւոր աշակերտուհիներ:) յայտնեց, որ միս ուսումնական տարին կը բացվի չորրորդ դասատուն ևս, ուր ուրիշ առարկաների թւում հաշուապահութիւն ևս դաս կը տրվի: Խօսելով ուսումնարանի ուսումնական դրութեան մասին, ուսումնարանի տեսուչ պ. Զիգիրանեանցը այնպիսի պայծառ գոյներով նկարագրեց ուսումնարանի ուսուցիչների և իր գործունէութիւնը և աշակերտուհիների առաջադիմութիւնը, որ, կարծես, աշխարհիս երեսին միակ օրինակելի, զուրկ ամեն պակասութիւններից ուսումնարանը լիներ Ցիվնանեան–Մարիամեան դպրոցը: Մի այդպիսի ինքնագովութիւն մենք մեր կեանքում առաջին անգամ ենք լսում մի տեսչի բերանից: Պ. տեսուչը վերջացնելով իր հաշիւը, սկսեց պարգևներ բաժանել առաջադէմ աշակերտուհիներին. պարգևները դանազան պատկերազարդ մանկական գրքեր և աւետարաններ էին: Միայն աշակերտուհիներից մէկը ցակոբեան ազգանունով, որ ուսումնարանի ամենառաջադէմ աշակերտուհին է, կարմիր ժապաւէնով մէկ պսակ ստացաւ: Այդ մի և նոյն աշակերտուհին անգիր մէկ ճառ կարդաց, որ բոլորի վրա լաւ տպաւորութիւն գործեց: Ապա սկսվեցաւ ձեռագործների վիճակախաղը և դրանով վերջացաւ հանդէսը:

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Մայիսի 6-ին

Ալէքսանդրապօլի հայ թատերասիրաց խումբը մանակցութեամբ մեծապատիւ պարոնայց Եղիկեանցի, Թոխաթելեանցի և Աշխարումեանցի (ե-

*) Դիմել այդպէս թէ օրիորդին և թէ տղամարդկիներին—մի և նոյն անքաղաքավարութիւն է. Աւելացնում եմ այս խօսքերը, վախենալով, որ դուք չը կարծէք թէ ձեզ դամսկի կավալէրութեան դասը են տալիս:

*) Ի նկատի պ. Սա. Պալասանեանն էլ ոչ երեխայի չափ է հասկանում, ոչ էլ Նալբանդեանի չափ հայերէն լեզու գիտէ, որովհետև նա իր հայերէն լեզուի քերականութեան մէջ «մի վրդովիք», «մի անուանիք» և այլն ձև է ընդունել.

գրքերի հրատարակութեամբ, որ այնպիսի մի լեզուով գրած բնագիր էր տուել օրիորդին թարգմանելու. Այսուհետև, գոնէ կազմակերպված «Ընկերութիւնը» մի և նոյն սխալը չը գործի և պատուիրեր տալու ժամանակ թարգմանութիւնների համար այնքի առաջ ունենայ բնագրի լեզուն, որ թարգմանողները չը չարչարվեն.

3) Մինչ այդքան էլ չէք իմանում, պ. Նալբանց, որ գործածելով մի որ և իցէ գաղափար յայտնելու համար դանազան, բայց մի և նոյն նշանակութիւն ունեցող բառեր, մենք լեզուին աւելի արժանաւորութիւն ենք տալիս. Նորա մէջ որ պատուելի օրիորդը մի տեղ գործ է ածում հանաք—միւս տեղ՝ կատակ, մի տեղ՝ առնել—միւս տեղ՝ դնել, պ. Նալբանցը մեծ պակասութիւն է տեսնում. Ի սէր Աստուծոյ, պ. Նալբանց, մոռացեք փոքր ինչ ձեր գրածի վրա, ինչ կը վերաբերի Նորա և նրա, վրայ և վերայ բառերի չփոթելուն, իրաւացի նկատողութիւն է, որ հարկաւոր է պահպանել միակերպութիւն և եթէ պ. Նալբանցը իրան նեղութիւն տայ և թերթէ «Թումա եղբօր տնակը», նա կը նկատէ, որ այդ չփոթութիւնը միայն առաջին 8 երեսների մէջ, այսինքն առաջի տպագրական շարուածքի մէջ է և հետևեալ երեսներում միայն հինգ թէ վեց անգամ կրկնվում է Նրանց փոխանակ Նորանց, այն ինչ Նորանց, վերայ և այն հարիւրներով են պատահում. Չը բացատրենք արդեօք այդ Նորանով, որ առաջին 8 երեսների մէջ մտել է այդ չփոթութիւնը սրբագրողի ծորից, որը երևի, կամցել է մոցնել իր ուղղագրութիւնը և «Թումա եղբօր տնակ»-ի մէջ, այլապէս և մնացած 72 երեսների մէջ մի և նոյն չփոթութիւն կը լինէր: Ուրեմն, պ. Նալբանց, այդ չփոթութիւնը, ինչպէս դուք գրում էք, գրքի մէկ ծայրից մինչև միւս ծայրը չէ.

4) Պ. Նալբանցը, վերջացնելով իր յօդուածը, նկատում է, որ սմբողջ թարգմանութիւնը լի է տառական, կէտադրական և առոգանական սխալներով. Առանց փաստերի խօսել ի հարկէ չատ հեշտ է, կամ թէ ասածը՝ այսպիսի օրինակներով հաստատել. չէ կարելի ասել. «Հասկանում ես ինձ», այլ պ. Նալբանցի կարծիքով անչուշտ հարկաւոր է ասել. «Հասկանում ես իմ ասածը», ապա թէ ոչ հայերէն խօսած չես լինի. կամ չէ կարելի ասել. «Թող որմնէ քեզ Աստուած...» այլ հարկ էր ասել. «Աստուած որմնէ քեզ...» և այլն այսպիսի դատողութիւնների և օրինակների ամբողջ մի շարք: Ոչորմելի քննիչ.... Պ. Նալբանցը կէտադրական կանոնների վրա է խօսում, բայց ինքը կարծում է, որ—«Աղէ՛կիկը հօր հետ, կանգնած չոգենաւի մէջ, նայում էին...» նախադասութիւնից հասկացվում է այն, որ ոչ թէ աղէկիկը և հայրը կանգնած էին չոգենաւի մէջ, այլ չոգենաւն էր կանգնած. Այդ, պ. Նալբանց, այդպէս կարելի էր կարծել միայն այն ժամանակ, երբ այդ նախադասութեան մէջ ստորակէտներ չը լինէին, իսկ երբ «հօր հետ»-ից յետոյ և «մէջ»-ից յետոյ ստորակէտներ կան, այդպէս չէ կարելի հասկանալ.

5) Վերջապէս, պ. Նալբանց, դուք գիտէք քաղաքավարութիւն ասած բանը ինչ է, Վերջին մէջ ծախող (կլնաս) չի թողլ տայ իրան դիմել որ և իցէ հասակաւոր օրիորդին և ասել, որ նա մի մանուկի չափ հասկացողութիւն չունի. իսկ դուք, որ ձեզ մի լրագրի մշակաց աշխատակից էք համարում, բանաստեղծների կարգի մէջ էք դասում, թողլ էք տալի ձեզ հետևեալը*) «մեր յարգելի օրիորդը գիրք է թարգմանում և նուիրում է հայ մանուկներին. բայց նոցա չափ ևս չի կամենում հասկացող երևալ, որովհետև նոքա բաւական լաւ են հասկանում, թէ ինչպէս պէտք է խօսել մի գործազրութեան մասին, որի կատարելն արգելվում է. Այդպէս անա մեր թարգմանչուհին ասում է. «մի ցաւացրու, մի մեռիր, մի վրդովիք, մի անուանէք.... փոխանակ ասելու. «մի ցաւացնիլ, մի մեռնիլ, մի վրդովիլ, մի՛ անուանիլ...*)

Գիտացէք այսուհետև, պ. Նալբանց, որ դրան անուանում են անքաղաքավարութիւն—բարոյական ոգիտութիւն... աւելի ասելիք չունեմ դրա մասին.

Վերջացնելով յօդուածս մի նկատողութիւն ևս ունեմ անելու պ. Նալբանցին, որին հարիւր թէ միւս անգամ կը դիմեմ, վախենալով, որ կարող եմ նորանից փողոցային յիշոցներ ևս լսել: Մի մարդուց որ ընդունակ է մի օրիորդին առանց որ և իցէ պատճառի վիրաւորել, կարելի է ամեն բան սպասել...

Դուք, պ. Նալբանց, ձեր յօդուածի սկզբում մի արհամարհական կերպիւ ասում էք. «Թումաս եղբօր տնակը Թիֆլիսի ընկերութեան չորրորդ գործն է. միայն ոչ ներկայ ընկերութեան, այլ նորա նոր սկսված ու տակաւին չը կազմակերպված ժամանակաւոր ընկերութեան անուն կրող մի երկու անձանց աշխատանքների արդիւնքն է: Ուստի այս թարգմանութիւնից, ինչպէս և իւր նախորդներից՝ շատ սպասելիք ու պահանջելիք չունենք»: Նախ և առաջ, պ. Նալբանց, անցնում տարի կազմվեցաւ մի փոքրիկ խումբ ոչ թէ մի երկու անձից, այլ 4—5-ից և այդ խումբը երբէք չէ կրել «Թիֆլիսի ընկերութեան և այլն» անունը. «Թումաս եղբօր տնակը», պ. Նալբանց, այս, այդ խմբի աշխատանքների արդիւնքն է, բայց այն էլ իմացէք, որ այդ աշխատանքը ներկայ ընկերութեան խմբագրական մասնաժողովը ընդունել էր իբրև համապատասխան այն պահանջներին, որին դա պէտք է ձգտէ, հակառակ այդ աշխատութիւնը չէր կրի կառավարութիւնից հաստատած «Ընկերութեան» անունը. Ես համոզված եմ, որ եթէ «Մեղուի» խմբագրութիւնը ուշադրութիւն դարձնէր ձեր վերոյիշեալ խօսքերի վրա, հարիւր թէ նա կարող էր տեղ տալ նոցա իր լրագրում, վասն զի, օրքան յիշում եմ, «Մեղուն» անցեալ տարի այդ խմբի աշխատանքները չափազանց գովեց, ուրեմն այս տարի մի և նոյն «Մեղուն» ձեր յօդուածի միջորդութեամբ չէր կարող ասել. «ուստի այս թարգմանութիւնից, ինչպէս և իւր նախորդներից՝ շատ սպասելիք և պահանջելիք չունենք.»

Ինչ արած, պ. Նալբանցը կարողացաւ «Մեղուի» № 39 մէջ տպած յօդուածի նման մի քանի յօդուածներ գրել և անեկդոտներ տպագրել, իսկ մի փոքրիկ խումբ (դէպի որը կարծեմ, պ. Նալբանց,կարելի էր վերաբերվել և առանց արհամարհանքի) կարողացաւ մի քանի, իր կարծիքով, լաւ մանկական գրքեր ի լոյս ընծայել՝ նորան յանձնվեց կազմել այժմեան մեծ անուն կրող «Թիֆլիսի ընկերութիւնը.» Ում աւելի է տուած, նորանից աւելի կը պահանջվի, միայն ես իմ կողմից ամենեվին գոհ կը լինեմ, եթէ կառավարութիւնից հաստատված և կազմակերպված «Ընկերութիւնը» կը չարունակէ ի լոյս ընծայել մանկական գրքեր նոյն իսկ ուղղութեամբ և նոյն տեսակ. Իսկ որորդ Տէր-Մարիսեանին կը ցանկամ չարունակել իր սկսած գեղեցիկ և համակրելի գործը՝ մանկական գրքերի թարգմանութիւնը և ուշադրութիւն չը դարձնել ամեն մի ոգէտ քննիչի վրա.

Գար. Միրզոյան